

«ՏՈՒՀԱՅ ԴԱԻԱՌԻ» ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Պ. Մ. ՄՈՒՐԱԿՅԱՆ

Թրակացու քերականության 'Εθνεὶχόν ὅτι ἐστὶ τὸ ἐθνεὶχόν ὁ γλῶσσος, ὡς Φρῆξ Γαλατῆς բանաձևի դիմաց հայերեն թարգմանությունն ունի՝ «Ազգական է, որ ազգի է յայտական, որպես գողերձական, տուհ, վրացի»¹: Ն. Ադոնցն այս կապակցությամբ դիտել է. «Դիոնիսիոսի բնագրի սույն հատվածում ուշագրավ են անվան էթնիկական կերպի (11) հայկական օրինակները՝ գողերձական, տուհ, վրացի՝ բնագրի Փրձ (կարգա՝ Փրձ—Պ. Մ.). Γαλατῆς-ի փոխարեն: Առաջին անունը արդյոք առնչություն չունի՞ Պտղոմեոսի մոտ առկա Καταρζήνη գավառի անվանը, որը սովորաբար ընդունվում է իբրև աղավաղյալ Καταρζήνη, հայ. Կղարչք: Տուհ անունը հանդիպում է հոբենացու մոտ, իսկ վրացի-ն, ըստ երևույթին, հավելում է»²:

Հիշյալ աշխատության գրախոսության առիթով Ն. Մառը անդրադարձել է այս փաստին և, ընդունելով Ն. Ադոնցի բացատրությունները, որոշ մասնավորեցումներ առաջարկել: Նա ևս գտնում է, որ «Վրացի տերմինը որոշ է և ըստ ձևի, ուշ ընդմիջարկություն է, բայց համենայն դեպս ուշագրավ է, որ հետագա ընդմիջարկողը հայկական օրինակներում դիտարկում է վրացական ցեղերի անուններ»³: Վրացի տերմինը Ն. Մառը համարում է տուհ-ի բնորոշում-բացատրություն և ավելացնում. «Ընդմիջարկողը հարկավ իրավացի է: տուհ-ը էթնիկական բուշ անվան բարբառային, մասնավորապես սվանական ձևն է: Հենց այս սվանական ծագումը -ar սվանական հոգնակիակերտի հետ. այսինքն՝ ծագ-ar, պահպանվել է Տբեթի վանքի հանդիման գտնվող Եղեռնոսն ծագ-ar-is-i հին ամրոցի վրացական անվան մեջ, որը տեղորոշվում է այն Կղարչք գավառի հարևանությամբ, որի հետ հիմնավոր կերպով Ն. Ադոնցը նույնացնում է Պտղոմեոսի Καταρζήνη-ն: Այստեղից հետևում է, թե ոչ միայն ընդմիջարկությամբ, այլև Դիոնիսիոս Թրակացու հիմնական հայկական պատումում հայ թարգմանիչը ցուցաբերում է վրացական տերմիններ գործածելու նույնպիսի հակում, ինչպես Դավիթը [Փիլիսոփան]»⁴:

Թրակացու ἐθνεὶχόν ազգական տերմինը Դավիթ Փիլիսոփան մեկնում է այսպես՝ «Ազգական է, որպես միում (VՁԷ. միոյ) ազգի մարդ ինքեամբ յատուկ կարող է զբովանդակն յայտնել զազգ»⁵: Նշանակում է՝ գողերձական, տուհ, վրացի տերմինները առանձին միավորներ են, և «վրացի»-ն «տուհ»-ի

¹ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Пг., 1915, էջ 29, հմտ. Nicolas Adontz, Denys de Thrace et les commentateurs arméniens. Louvain, 1970, էջ 20:

² Н. Адонц, նշվ. աշխ., էջ CLXXII, հմտ. ֆրանս. թարգմ., էջ CLIX:

³ Н. Марр [Рец. на книгу] Н. Г. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, X. В., т. V, вып. I, Пг., 1916, էջ 59:

⁴ նույն տեղում, էջ 59—60:

⁵ Н. Адонц, նշվ. աշխ., էջ 110: Տարբերակը տե՛ս N. Adontz, նշվ. աշխ., էջ 325:

բնորոշում-բացատրությունը չպիտի լինի, քանի որ այն ինքնին «կարող է զբովանդակն յայտնել դադգ»։ Սույն տերմինը բնորոշարկություն համարելիս ն. Ադոնցը ելակետ է ունեցել հունարեն բնագրի երկու էթնիկոնի դիմաց հարևան երեկի առկայության փաստը և ոչ տուփ-ին լրացնել-բացատրելու կոչվածությունը, ինչպես թվացել է ն. Մառին։

Այսպիսով, ն. Մառն ու ն. Ադոնցը արձանագրել են, որ հայերենում վկայված է տուփ ցեղանուն և Տուփազ գավառ (Նորենացի, Բ, 65)։ Իրավաբան տեղորոշմանը նրանք ի մասնավորի չեն անդրադարձել, թեև ն. Մառը փաստորեն այդ կատարել է՝ թուշերի սվանական նս՛՛ անվանն ու սու՛՛գարի-ս տեղանվանը առնչելով։

Մի քանի տարի առաջ Աս. Մնացականյանը քննության առավ «Վարդգես Մանկան» վիպական հատվածը և աղբյուրների ու գրականության ուսումնասիրությունից եկավ այն եզրակացություն, թե «Վարդգես Մանկան հայրենիքը՝ Տուփաց գավառը պիտի որոնել Հյուսիսային Հայաստանում»⁶։ Ընդհանուր առմամբ այս եզրակացությունը ճիշտ է, որովհետև տուփ-երը, ըստ Թրակացու թարգմանչի հիշատակության, ապրել են գողերձականների և վրացիների հարևանությամբ։ Սակայն թվարկման հերթականությունը տեղաբաշխման հաջորդականություն չի պայմանավորում։ Թարգմանչի օրոք այլևս ոչ տուփեր կային, ոչ էլ գողերձականներ։

Սովսես Նորենացու տեղեկությամբ Վարդգեսը Տուփաց գավառից շարժվել է դեպի հարավ և Քասաղ գետի հունին դուզնթաց հասել է Շրեշ բլուր ու Վաղարշապատ. «Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուփաց զաւառէն, զՔասաղ գետով, եկեալ նստաւ զՇրէշ բլրով, դԱրտիմէդ քաղաքաւ. զՔասաղ գետով, կոել կոփել զգուռնն Երուանդայ արքայի»⁷։ Ուրեմն՝ հիրավի հյուսիսից։

Վերջերս Տուփաց գավառի տեղագրության խնդիրն արծարծեց Հ. Բարթիկյանը։ Նրա կարծիքով տուփ-ն ու Տուփաց գավառը «ոչ այլ ինչ է, քան տառիս-ն ու տառիս-ների գավառը», որ հիշատակվում են Քսենոփոնի «Անաբասիսում»⁸։ Ըստ հեղինակի՝ «նթե Քսենոփոնը լսել է տառհ (գուցե տայոհ՝)», ապա նա միայն տառի կարող էր գրել, քանի որ հունարենում չկա «հ» տառը ինչ վերաբերում է «առ» (այոհ՝) ձայնավորներին, ապա տեղի է ունեցել սովորական ձայնափոխություն, երկու կից գտնվող ձայնավորները տվել են «ու» և «տառհ»-ը դարձել է «տուհ»⁹։

Սույն եզրակացությունը, մեր համոզմամբ, փաստարկված չէ, որովհետև՝

ա. Քսենոփոնը տառն կամ տայոհ լսել չէր կարող, քանի որ Տայ-ք Տայո-ց-ի հիմքը Տայ/Տայո-ն է¹⁰, ուստի հունարենում առկա է Աչո (այստեղից՝

⁶ Ա. Մ. Մնացականյան, Գիտությունների «Վարդգես Մանկան» վիպական հատվածի վերաբերյալ, «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 2, էջ 232; Ե. Գուրյանն ու Ա. Ալպոյանյանը «Տուփաց գավառը» նույնացնում են «Կասպաղովկիայի» հետ (տե՛ս Ա. Ալպոյանյան, Պատմ. հայ Կեսարիոյ, Ա, Գահիրե, 1937, էջ 47, 153)։

⁷ «Մովսիսի Նորենացու Պատմութիւն Հայոց», Տիգրիս, 1913, էջ 199; ն. Մառը փորձել է հատվածը տողատել (նշվ. աշխ., էջ 59)։

⁸ Հ. Մ. Բարթիկյան, «Տուփաց գավառի» տեղագրության հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 4, էջ 201։

⁹ Նույն տեղում։

¹⁰ Հմմտ. Heinrich Hübschmann, Die altarmenischen Ortsnamen, Amsterdam, 1969, էջ 277։

Մասի և Մասիս), վրացերենում՝ Պաթ (այստեղից՝ Պաթնո, Պաթո): Հունական միջավայրում այս տեղանվան ու ցեղանվան երկօրինակ արտասանության և գործածության փաստը վկայված է Ստեփանոս Բյուզանդացու (VI դար) *Ἐθνικὴ ἀρχαίολογία* աշխարհագրական բառարանում. *Μᾶσσι, ἐθνος ἐνδοτέρω τῶν Ἰόντων, καὶ τῆ γῶραι ὄνομα, τοῦτοσδε τοῖσδε Μᾶσσι καλεῖσθαι, ὡς Σοφοκλεῖτος ἐν τῆ ἀναβάσει τραγ.*¹¹. — «Տադիներ՝ տոհմ ներքին Պոնտոսում: Երկիրը ևս այդպես է կոչվում. ոմանք նրանց տառ-ցի (իմա՛ տայեցի—Պ. Մ.) են անվանում՝ ինչպես Սոփալիներ տոսը իր Անաբասիսում»: Ո՛չ հայերենում և ո՛չ էլ վրացերենում հիշյալ անվան մեջ և հազագ շկար ու չէր արտասանվում¹²:

բ. Քսենոփոնի օրոք (V դար մ. թ. ա.), ինչպես և նրանից հարյուրամյակներ հետո, հունարեն լեզուն իս հնչյուն և համապատասխան հնչույթ չուներ: X-ն գրվում և արտասանվում էր իբրև լիարժեք Ք, ուստի չ-ի համարժեքը ստանալու համար հոմեոգրիները շ-ին և էին ավելացնում՝ շՆ, իսկ V դարի մեր թարգմանիչները *Χριστός*-ը Քրիստոս էին տառադարձում, *γῶραι:αχοτοι:ε*-ը՝ քորեպիսկոպոս, *χρῆστων:ε*-ը՝ քրոնիկոն ևն¹³: Այդպես էին վարվում և հունարենին առնչվող վրաց մատենագիրները (հմմտ. *Յհոն* ՊՅ, *Յհոն* Յոնյոն, *Յհոն* Յոնյոն և այլն): Այստեղից հետևում է, որ եթե նույնիսկ մեղանում երբևէ տառն կամ տալոն արտասանվեր, ապա դարձյալ *Μᾶσι*-ն տառադարձվել չէր կարող, քանի որ և > Ը հնչյունափոխությունը պատճառաբանություն չի գտնում:

գ. Հայերենում առ երկհնչյունը կամ այդ հնչյունախումբը պարզեցման ճանապարհով ու չի տա: Այսպես, օրինակ, հայոց սեռականը վիճագիր և մատենագրական հուշարձաններում վկայված է և հնչյունափոխված ձևերով՝ *նայոց* (Արուճ, VII դար), *հայոց* (Փառնի, IX դար, Նորատուր, X դար), բայց ոչ *կրբեք հուց*, մինչդեռ Տայոց-ից Տուհաց ստանալու համար միշտ այդպիսի անցում է պահանջվում:

դ. Տայոց-ի ուղիղ ձևը աղբյուրներից քաջ հայտնի Տայլ-ն է, իսկ *հորենացու* հիշատակած Տուհաց-ի ուղղականը՝ *Տուհլ կլինի¹⁴: Արդ, եթե այս երկու տեղանունները նույնական լինեին կամ թեկուզ ընդհանուր ծագում ունենային՝ պիտի որ սեռականում միաձև հոլովվեին, մինչդեռ մի դեպքում Տայլ-ոց է, մյուս դեպքում՝ Տուհ-ագ: Ինչպես երևում է, *հորենացու* համար Տայոց և Տուհաց գավառները նույնացման եզր չեն ունեցել, ուստի նա իր բերած վիպական հատվածի մեջ Տուհացը Տայոց սրբագրելու անհրաժեշտություն չի տեսել:

¹¹ *Sl' u Georgia*, III, 284. հմմտ. H. Hübschmann, *նշվ. աշխ.*, էջ 277:

¹² Հ. Կարազյուզյանը վերջերս ըստ ամենայնի հիմնավորեց, որ *Μᾶσι*- ձևի մեջ Ն-ն ոչ թե ուրարտերենի -eje ածանցիկն է, այլ «հայերենի հոգնակիության ցուցիչ ք-ի արտացոլումը հունարենում» (*«Արարեր»*, 1978, № 6, էջ 72—73): Ի հաստատումն այս դրույթի ավելացնենք, որ հայերենի ք-ն փոխանցվել է և վրացերենին՝ համադրել հոգնակիակերտ օ-ի վերածվելով (Պաթ-օ-ո):

¹³ Ամբողջական ցանկը տե՛ս Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, II, Երևան, 1951, էջ 33—34:

¹⁴ *հորենացու*: գիտական բնագրի հրատարակիչները հատուկ անունների ցանկում նախընտրել են արտացոլել հոլովված բառաձևը (հարկավ ուղղականի վերականգնմանը շանդրադառնալու պատճառով):

ե. Վարդգես Մանկան վեպը ձևավորվել ու կյանք է մտել կենտրոնական Հայաստանում, կարելի է ասել՝ Թյրքարատում: Պահպանված դրվագի համաձայն, Վարդգեսը «հատուած զնացեալ... ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով, եկեալ նստաւ զՇրէշ բլրով, զԱրտիմէդ քաղաքաւ, զՔասաղ գետով...»: Իրավացիորեն նկատված է, որ Քասաղ գետով Շրէշ բլուր և Արտիմէդ քաղաք գալու համար ուղևորվողը Հյուսիսային Հայաստանից է ելնելու, այնինչ Տայքը Հայաստանի հյուսիս-արևմուտքում է գտնվում և հիմք չկա ենթադրելու, թե ժողովրդական ասքը Վարդգես Մանկան ճանապարհը երկարացնելու միտում ունի:

Այսպիսով, Թրակացու քերականության թարգմանության տուն-երը ապագի չեն և ոչ էլ Տայք գավառն է հորենացու *Տուհ-Տուհաց գավառը:

Ուտիքի մասին խոսելիս Հովհ. Դրասխանակերտցին երկու անգամ հիշատակում է Տուս անունով մի բնակավայր. հաշենից ու Գարգմանից հետո Բուղան գալիս է «յուտի գաւառ՝ ձերբակալ ի Տուս գիւղ առնէ զՍտեփանոս, որում և Կոն անուանէին զնա. որ ի նախնույ իւրմէ Սեկոյ՝ Սեորգիք ալզքն անուանէին»¹⁵: Եվ ապա՝ Սմբատ արքան Ալանաց Դոնից հարավ ընկած այլ գավառների թվում նվաճում է և Ուտիքը. «և անտի ի հարաւակողմն կոյս զԿուր գետով մինչև ի քաղաքն Տփխիս. և զյուտի գաւառ մինչև ի քաղաքն Հունարակերտ և մինչև ի Տուս և ի Շամքոր»¹⁶:

Մասնագիտական գրականության մեջ բավական վաղուց հայտնի է, որ Տուսը գետեղելի է Տաուշի (Տավուշի) տեղում կամ նրա մերձակայքում: Հովհ. Դրասխանակերտցին անկախ Տուսից հիշատակում է և՛ «Տաւշոյ ձորը», և՛ «Տաւշոյ ամրոցը»¹⁷, որը կարծես խանգարում է Տուսի և Տաուշի նույնացմանը: Բայց այստեղ փաստորեն գործ ունենք մի այնպիսի ժամանակաշրջանի հետ, երբ Տուսը իբրև գավառանուն և բնակավայրի հորջորջում արդեն դուրս էր մղվում գործածությունից, իսկ Տաուշը նոր էր սկսում տարածում ստանալ, ուստի Դրասխանակերտցին Տուսը միայն իբրև բնակավայր, գյուղ է հիշում, իսկ գավառը նրա համար այլևս Տաուշն է (այստեղից էլ՝ Տաւշոյ ձոր, Տաւշոյ ամրոց): Որ ավելի վաղ շրջանի աղբյուրները Տաուշ առճասարակ չգիտեին և նրա տեղում Տուսն էին գործածում՝ երևում է «Աշխարհացուցի» հիշատակությունից. «Ուտիք... ունի գաւառս, զոր <այժմ> Աղուանք ունին, եւթն՝ Առան-ոտտ, Տոի, Ռոտ—Պարսեան, Աղուէ, Տուս Քստակ. Գարգման...»¹⁸: Ս. Երեմյանը որևէ կասկած չունի, որ բնագրի «Տուշքատակ» ընթերցումը¹⁹ աղավաղյալ է և պիտի լինի Տուս-Քստակ (Քուստակ), իսկ «քուստ, քստակ» պարսկական տերմինը քաջ ծանոթ է «Աշխարհացուցի» հեղինակին (քուստի նմուշ, քուստի խորասան, քուստի Կապկոճ ևն) և վարչական միավոր—գավառ է նշանակում: Ուրեմն՝ VI—VII դդ. աղբյուրներին Տուս գավառը (Տուս-Քուստակը) ծանոթ է եղել և գտնվել է Ուտիքում, ուր և գտնվում էին Դրասխանակերտցու Տուս գյուղն ու Տաւշոյ ձորը, ամրոցը:

¹⁵ «Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 127 (հմտ. վրաց. հրատ., էջ 24):

¹⁶ Նույն տեղում, էջ 161 (հմտ. վրաց. հրատ., էջ 64):

¹⁷ Նույն տեղում, էջ 311, 321:

¹⁸ Ս. Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացուցի»-ի, Երևան, 1963, էջ 109, հմտ. էջ 86:

¹⁹ Տե՛ս «Աշխարհացուցի Մովսիսի Խորենացոյ», Վենետիկ, 1881, էջ 33:

Հետևաբար Տուս գետի (Տավուշ գետ, Քովուդ-չալ) և Տուս փուտակի երես-
յանական տեղորոշումը լիովին արդարացի է, թեև գիտնականը այդ կատա-
րել է ենթադրաբար:

Արդ, հնչյունական ի՞նչ փոփոխություն է արտացոլված Տուս անվան մեջ:
Հայագիտությանը ծանոթ են մի քանի տասնյակ նույնահանգ տեղանուններ,
որոնք հայցական հոլոված են են երկայացնում (հմմտ. Մասիս, Գորիս, Արա-
մուս, Նորատուս և այլն)²⁰: Ուղղականում նրանք ստանում են հոգնակի-ուղ-
ղականի ֆ ցուցիչը (Մասիք, Գորիք, Արամունք, Նորատուք): Բնականաբար
Տուս-ի ուղղականը Տուֆ-ն է, սեռականը՝ Տուաց (հմմտ. Նորատուք-Նորա-
տուաց-Նորատուս): Այս իրողությունը առանց որևէ բննության հայտնի է
եղել Հ. Հյուբշմանին, ուստի Տուսի դիմաց գրել է. «հյց. «Տուք»-ի²¹: Այլևս
երկմտանք չի մնում, թե առից ցեղանունից կազմված Տուֆ գավառանունը
նույն Տուս-՝ Տուֆն է՝ հ հազագի կորուստով:

Տուֆ-ից գործածական է դարձել Տուխս-ը, իսկ ապա հ-ի անկումով՝
Տուսը, ինչպես որ՝ պահք > պահս > պաս:

Խորենացու երկում պահպանված «Վարդգես մանկան» վիպական հատա-
կուսորը, ինչպես ենթադրվում է, մ. թ. ա. VI—III դդ. սահմանագծում տեղի
ունեցած պատմական իրադարձությունների արձագանքն է: Որքան էլ վիճելի
լինի այստեղ հիշատակվող «Երուանդ արքային» Երվանդ Ա-ի կամ մեկ այլ
իրական անձնավորության հետ նույնացնելու խնդիրը, դրվագի պատմաաշ-
խարհագրական ընդգրկումը վեպում պատմվող անցուդարձերի կարևորության
վկայություն է: Այդ իսկ առումով էլ «Տուհաց դաւառի» տեղորոշման շնորհիվ
մասամբ ավելի ընկալելի է դառնում վեպի իրական հենքը, իսկ նրա հիշա-
տակությունը ապացույց է, թե այդ գավառի հայ բնակչությունը նշանակալի
մասնակցություն պետք է բերած լինի երկրի քաղաքական ու մշակութային
անցուդարձերին՝ կենտրոնական Հայաստանում ձևավորված վեպի հիշատա-
կությանն արժանանալով:

К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ «ОБЛАСТИ ТУХОВ»

П. М. МУРАДЯН

(Резюме)

При формулировке понятия «этникон» армянские средневековые толкователи Дионисия Фракийского заменили этнонимы греческого оригинала Φρωξ, Γαλατγς терминами местного происхождения — գողերձա-
վան (годердзец, годердзский), տուհ (тух), վրացի (грузин). Второе упоминание этникона տուհ встречается у Моисея Хоренского в названии «Об-
ласти тух'ов» (кн. II, 65). В последнее время было высказано предполо-
жение, что тух'ов следует идентифицировать с таол'ами Ксенофонта, а
«Область тух'ов» — со страной тахов, — арм. Тайк'ом. Однако данное

²⁰ П. М. Мурадян, Вишительные формы в именной по данным топоними-
ки Армении (к постановке вопроса) ՀՍՍՀ ԳԱ «Արարկը» (հաս. գիտ.). 1971, № 4,
Գ. 21—30:

²¹ H. Hübschmann, նշվ. աշխ., էջ 240, ծան. 1:

заклучение не представляется верным как в историко-географическом, так и в лингвистическом плане; согласно легенде, приводимой Хоренским, выходцы «из области тунов» прибыли в Араратскую долину, ко двору царя Еруанда, по течению реки Касах, что указывает на путь с севера на юг, а Тайк находится в северо-западной части Армении. К тому же топонимы *Տայք* (Тайк) и **Տուհք* (Тухк) не могут быть сведены к одной форме, ибо переход *տ/տը* в *ու* не является закономерным.

Средневековые первоисточники («Армянская география VII в.», Иоанн Драсханакертский, Вардан Великий и др.) знают в Стране утиев (Утик) область, а то и поселение *Тус*, что является аккумулятивной формой топонима *Тул* (<Тухк). «Область тунов» по всем данным может быть отождествлена с этим Тухк—Тук—Тус—Тавуш—Товузом.

Вопрос об идентичности тунов и Պուփ — тушей, выдвинутый Н. Я. Марром, остается открытым, хотя и становится более резонным.